Հրաչյա Մանուկյան

300 լավագույն մտքեր

Երևան
Հեղինակային հրատարակություն
2023

ՀՏԴ 1/14
ԳՄԴ 87

Մ 283

Մանուկյան Հրաչյա
Մ 283 300 լավագույն մտքեր / Հ. Մանուկյան.- Եր.: Հեղ. հրատ., 2023.- 312 էջ:

Գրքում ընդգրկված են 2012-2022 թթ. ընթացքում հեղինակի լավագույն կարճ մտքերը:

Դրանք անհատի և հասարակության, մարդու արտաքինի և ներաշխարհի, մտածողության և գիտակցության, տարիքի և ժամանակի, կրթության և աշխատանքի, ինքնազարգացման և աճի, երջանկության և կյանքի փիլիսոփայության մասին են:

Սա նման ձևաչափով հեղինակի առաջին գիրքն է:

ՀՏԴ 1/14
ԳՄԴ 87

ISBN 978-9939-0-4619-8
© Մանուկյան Հրաչյա, 2023

Նախաբան

Սիրելի՛ ընթերցող, իմ կյանքի ամենակարևոր գիտակցումներից մեկն այն էր, որ մարդու միտքն արժեք ունի: Խոսքը «օժտված ուղեղով» մարդկանց մասին չէ, այլ բոլորի: Լավ մտքեր ծագում են յուրաքանչյուր գլխում, ոչ թե հատուկ գլուխներում: Մտածողները սովորական մարդիկ են, որոնք պարզապես ավելի շատ ժամանակ են հատկացնում և ավելի համակարգված են վերաբերվում մտածելուն:

Շատ մտքեր ծնվում են պատահաբար՝ այն ժամանակ, երբ մենք հետևում ենք կյանքի տարբեր իրավիճակներին ու երևույթներին: Բայց ինչպես կտրված ծառը և այդ ծառից պատրաստված փայտե սեղանը տարբեր արժեքներ ունեն, այնպես էլ մտքերը, կախված դրանց մշակումից, տարբեր արժեքներ կարող են ունենալ:

Երկար տարիների ընթացքում ես գրանցել եմ այն մտքերը, որ ունեցել եմ: Կար ժամանակ, երբ փողոցում մտքերն ինձ ավելի հաճախ էին կանգնեցնում, քան լուսացույցները:

Ես փակում եմ ջրի ծորակը լոգանք ընդունելիս, կանգնեցնում եմ հեծանիվը, կիսատ եմ թողնում գործը, ընդմիջում եմ ֆիլմը և գրի եմ առնում միտքը, որպեսզի այն չկորչի:

Գրելը հնարավորություն է տալիս նյութականացնել մտքերդ: Գրված մտքի շուրջ կարող ես մտածել այսօր, վաղը, մեկ տարի անց: Կարող ես միտքդ զարգացնել, փոփոխել, ջնջել:

Ես սիրում եմ մտածել միայնության մեջ, մի քանի ժամ, օրվա տարբեր ժամերին, տարբեր օրերի: Մտածում եմ տանը, այգում, զբոսնելիս, ավտոբուսում, մեքենայում, ցանկացած վայրում: Արդյունքում փորձում եմ միտքը, որը հեշտությամբ ձևակերպվել է երկար տեքստով, ներկայացնել սեղմ ու հասկանալի:

Գրքում ներկայացված 300 կարճ մտքերից յուրաքանչյուրը երկար ճանապարհ է անցել:

Դրանք պարզապես գեղեցիկ բառեր չեն: Յուրաքանչյուր մտքի հիմքում այն է, ինչ զգացել եմ, ապրել եմ, հետևել եմ. այն, ինչին հավատում եմ:

Չկա ավելի մեծ ազատություն, քան գիտակցված ապրելը:

Կարևոր է ոչ թե

**քո այսօրվա վիճակը,
այլ նախորդ ամսվա
համեմատ աճը:**

Ամենից շատ սովորելու կարիք ունի նա, ում թվում է, թե հասկացել է կյանքը:

Անիմաստ է մտածել սեփական տառապանքի մասին:

Պետք է այսօր սառնասրտորեն գործել, որ վաղն ավելի լավ կյանք ունենանք:

Երբեմն կյանքում
ամեն ինչ խառն է թվում:

Բայց երբ մաքրում ես
սենյակդ ու լոգանք ես
ընդունում, ամեն բան իր
տեղն է ընկնում:

Որքան բարձր է

մարդու գիտակցական մակարդակը, այնքան քիչ է նա ուրիշներին ծաղրում:

Օրվա եղանակով տարվա
եղանակը մի գնահատիր:

Մեկ արարքով մարդու
մասին վերջնական կարծիք
մի կազմիր:

Երբ քեզ անհանգստացնում է, թե ուրիշներն ինչ են խոսում քո մասին, կյանքդ դառնում է ուրիշներից կախված:

Ուրիշին տված զգացմունքն աճեցնում ես սեփական մարմնում:

Երբ սիրում ես, սեր ես աճեցնում, երբ ատում ես՝ ատելություն:

Ես միշտ ներում եմ մարդկանց:

Բայց ներել չի նշանակում մոռանալ:

Ներելը զգացմունքային մակարդակում է, հիշելը՝ գիտելիքի:

Սեփական ձեռքբերումների նկատմամբ զգացմունքներում զուսպ եղիր:

Չափից շատ ոգևորությունը ստիպում է քեզ հաղթող զգալ հաղթանակից առաջ:

Ես գնահատում եմ
յուրաքանչյուր օրը, քանի որ
գիտակցել եմ այն օրը,
երբ առջևում օրեր չկան:

Երբեմն
բացասական երևույթն
ընդամենը վատատես
մարդու կարծիք է:

Անհանգստացիր ոչ թե

**նրա համար, թե ինչ են
մտածում քո մասին,
այլ թե դու ինչ ես մտածում
ուրիշների մասին:**

Հանգիստ ուղեղն ավելի շատ գիտելիք է ստանում:

Որքան

գիտակցապես աճում ես,

այնքան

հանգիստ ես վերաբերվում
քեզնից տարբեր մտածող
մարդկանց:

Եթե փոփոխություն ես ուզում, նոր բան սովորիր:

Մի՛ եղիր այնպիսին, ինչպիսին երեկ էիր:

Մեկ տարին

մեծ ժամանակահատված է
ամեն ինչ փոխելու
կամ ոչինչ չփոխելու
համար:

3900

Վաճառքում

դրամ



Գրքի թղթային տարբերակը կարող եք պատվիրել

ԱՅՍՏԵՂ

ՉԵՂՉԵՐ

Գործում են զեղչեր Հրաչյա Մանուկյանի երկու և ավելի գիրք պատվիրելու դեպքում:

ՄԱՆՐԱՄԱՍՆ